# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

**ք.** ———————— **«–––» մարտի 2022թ.**

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) միջև:

**Հաշվի առնելով** Ինստիտուտի և Մարզպետարանի փոխադարձ համագործակցությունը և «պետություն - կրթություն – տնտեսություն - զարգացում» քառամիասնության ապահովման ձգտումը.

**Կարևորելով** պրակտիկ հետազոտությունների համատեղ իրականացումը և արդյունքների ներդրումը ի շահ Հայաստանի Հանրապետության.

**Բարձր գնահատելով** Ինստիտուտի և Մարզպետարանի պատրաստակամությունը համատեղ պրակտիկ հետազոտությունների իրականացման, ուսանողների պրակտիկաների կազմակերպման, համատեղ գիտագործնական միջոցառումների կազմակերպման համատեքստում.

**Հիմք ընդունելով** փոխադարձ պայմանավորվածությունները.

**Որոշեցին** կնքել սույն Հուշագիրը հետևյալի մասին՝

### 1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Ինստիտուտը և Մարզպետարանը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

### 2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով համագործակցության շրջանակներում Մարզպետարանը Ինստիտուտին ներկայացնում է մարզում տեղակայված հանրակրթական դպրոցներում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման և մարզադպրոցներում մարզումների կազմակերպման, ֆիզիկական կուլտուրայի կիրառման արդյունավետության բարձրացման, հանրային առողջության քարոզչության ոլորտներում ՀՀ Գեղարքունիքի մարզում առկա խնդիրները, որոնց

ուսումնասիրման և այդ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա Ինստիտուտի մասնագիտական ամբիոններում ձևավորում է մագիստրոսական թեզերի, ատենախոսությունների և այլ գիտագործնական աշխատանքների թեմաներ:

2.2 Ինստիտուտը իր պատրատակամությունն է հայտնում իր ուսանողներին առաջարկել պրակտիկ թեմաներ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում հետազոտություններ իրականացնելու համար, իսկ Մարզպետարանը իր պատրաստակամություն է հայտնում գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել այդ հետազոտություններն իրականացնողներին:

2.3 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև

2.3.1 համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման ինչպես նաև Ինստիտուտի և Մարզպետարանի լիազոր ներկայացուցիչների միջոցով Մարզպետարանում մագիստրոսական թեզերի պաշտպանությունների կազմակերպման և շրջանավարտներին տվյալ ոլորտում ՀՀ Գեղարքունիքի մարզում աշխատանքի անցնելուն աջակցման հարցերի շուրջ

2.3.2 ներդրումային, նորարարական, անվանական կրթաթոշակների, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.3.3 գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.3.4 Ինստիտուտի և Մարզպետարանի գործունեության ոլորտներին առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում

2.3.5 Սույն Հուշագրի գործողության շրջանակներում Ինստիտուտի և Մարզպետարանի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, մարզաբազաների, տարածքների, գույքի օգտագործման միջոցով,

2.3.6 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման շուրջ,

2.3.7 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու միջոցով,

2.3.8 Ինստիտուտի ուսանողների մասնագիտացմանն առնչվող գիտագործնական և մասնագիտական կատարելագործման, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների ներդրման ուղղություններով:

## 3. Համագործակցության սկզբունքները

Ինստիտուտը և Մարզպետարանը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

## 4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:
4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:
4.5 Սույն հուշագիրը կնքվել է Գավառ քաղաքում, 2022թ. մարտի –ին:
4.6 Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

**Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները**

| **Մարզպետարան** | **Ինստիտուտ** |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան | «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ |
| ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ | ք. Երևան, Ալեք Մանուկյան 11 |
| Մարզպետ՝ Կարեն Սարգսյան | Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան |
| _____ | _____ |
| ստորագրություն, Կ.Տ. | ստորագրություն, Կ.Տ. |